



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2016 թվականի №Մ  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ  
ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը և 17-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանության հայտը և Երևան քաղաքում ու մերձակա բնակավայրերում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 147,150ՄՀգ և 147,350ՄՀգ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն՝ մեկ տարի գործողության ժամկետով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությանը Երևան քաղաքում և մերձակա բնակավայրերում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրվող 147,150ՄՀգ և 147,350ՄՀգ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**